

գուկները ծախէին հացի սիրոյն, ընդունուէին այրերէ սակաւցած թուրք հին գիւղերու մէջ դուրսի գործերու սպասին, կամաց-կամաց քալէին դէպի ներսը, տունին սահմաններէն ու իյնային այս ու այն այրիին անկողինը, հաւատքին գնովը...: Մնացողները կը սպասէին տէր-տէրին գուշակութեան իրագործման, ճահիճին քաշուելուն: Ու մինչեւ այդ, անոնք մշակելու պարտաւորուած էին իրենց արօտները, ատենին շատ ընդարձակ, այդ օրերուն՝ ա՛լ անպէտ, նախիրին փճացումովը: Արօտավայրը միշտ գէշ, զառածած արտ մըն է ու արդիւնքն ալ բնութքին համեմատական: Ջուրին պակասը, բայց մա՛նաւանդ աւելորդ փառքը հաւասարապէս վնասաբեր իրողութիւններ են: Թուրքերու կողմէ որդեգրուած գաղթային սա քաղաքականութիւնը (Համիտի ուէժիմին ամէնէն յատկանշական եղելութիւնը: Այդ քաղաքականութիւնը բոլոր թուրքերուն սիրտին խօսող դրական արարք մըն էր: Անոր աշխատանքին համար նոր տուրքեր, նոր ծրագիրներ հաստատուեցան ու կրօնական խանդէն տարբեր ազգային դիտակցութեան անդրանիկ զգայութիւններն ալ այդ ճամբով մատուցուեցան ամբոխներուն) արդէն մշակելի հողերու պարունակէն չափազանց նեղցուած այդ գեղին տուաւ վերջին հարուածը, արգիւելով անոր ընդլայնուիլ դէպի լեռ, անտառ, ուր հողը, դարերով անմշակ, չէ յոգնած տակաւին ու առաջին քանի մը տասնամեակներուն կը վարձատրէ աշխատանքը: Գրաւեց այդ արտին պետութեան պատկանող ամայքներն ու տրամադրեց իսլամ գաղթականներուն: Մինչեւ տարագրութիւն (1915) այդ թշուառ մարդերը ստիպուած եղան վճարել գրաւուած այդ հողերուն կալուածատուրքը, յաճախ գնովը իշուկին:

Քանի մը խօսք՝ հոգեկան ալ տագնապներէն. վասընզի դուք թերեւս չէք գիտեր, որ հողը ապրում է, հոգի, տրամա, երբեմն կնոջ ու զաւկի չափ թանկ, գեղացիին զգացական դրութեան խորը: Այս պարագան է, որ թերեւս կը լուծէ կարգ մը անբացատրելի իրողութիւններ: